Ա Զ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դ.Ս.ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
ԷԹՆՈ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ ՌԵԳԻՈՆԱԼ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՏԼԱՍՆԵՐՈՒՄ ՔԱՐՏԵԶԱԳՐԵԼՈՒ ՄԻ ՔԱՆԻ ԱԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ
Մ Ա Ս Ի Ն

1. Ռեգիոնալ պատմա-ազգագրական ատլասները/որոնց կազմմամբ վերջին տասնամյակներում զբաղվում են խորհրդային ազգագրագետները/ որոշակի բնատարածքում կազմավորված էթնո-մշակութային արժեքներին վերաբերող բազմազան նյութը ընդհանրացնելու յուրատեսակ միջոց են:

2. Սակայն,ռեգիոնալ ատլասների առաջին հրատարակություններում("Историко-этнографический атлас Сибири",М.-Л.,1961; Историко-этнографический атлас "Русские",М.,1967) թույլ են տրվել վերը նշված դրույթից որոշ շեղումներ:

3. Հետազայում ճշգրտվեցին ռեգիոնալ ատլասներ կազմելու սկզբունքները և կատարելագործվեցին մեթոդները, ստեղծվեցին միասնական ծրագրեր, քարտեզագրման ընդհանուր մեթոդիկա և եղանակներ, որոնք,ինչպես կարելի է դատել արդեն հրատարակված նյութից, հետևողականորեն կիրառվում են ԽՍՀՄ հարավ-արևմտյան հանրապետությունների,Մերձբալթիկայի, Կովկասի, Միջին Ասիայի և Ղազախստանի ժողովուրդների ատլասներում:

4. Ընդլայնելով դրան, ինչպես ցույց է տալիս Կովկասի պատմա-ազգագրական ատլասի աշխատանքի փորձը, քարտեզագրելիս էթնո-մշակութային նյութը ողջ բազմազանությամբ հաշվի չառնելու վտանգի որոշ հիմք կա, հատկապես փոխառնչակցվող ազգային ընդհանրությունների և հիմնական գերակշիռ բնակչության միջավայրում առանձին էթնիկական և ազգագրական խմբերի տարաբնակման գոտիներում:

5. Սրա հետ կապված, նպատակահարմար է թվում նախահեղափոխական ժամանակաշրջանի սխեմատիկ քարտեզի հիմք ընդունել 19-րդ դ. բնատարածքային սահմանազծումն ըստ նահանգների, առանց ցույց տալու արդի բաժանումն ըստ հանրապետությունների/ավյալ դեպքում նկատի է առնվում Անդրկովկասը/:

ՀԱՅԱՍՏԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ ... ԻՆՍՏԻՏՈՒՏ

6. Այդ և դրանց հետ առնչվող հարակից հարցերը լուծելու համար անհրաժեշտ է ռեգիոնալ ատլասները ստեղծող հիմնարկությունների ու մասնագետների ավելի սերտ համագործակցություն և աշխատանքների կոորդինացիա՝ ՍՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի գլխավորությամբ:

Է.Տ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԼԽԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՆԱԳՌՑՆ ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

1. Անցյալ դարի վերջերին և 20-րդ դ. սկզբներին Արևելյան Հայաստանի ընտարածքում հավաքված է կանանց գլխի հարդարանքի հինգ համալիր. դրանցից չորսն ունի ավանդութային բնույթ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է որոշակի ազգագրական խմբի:

2. Համալիրները գլխի հարդարանքի զանազան տիպերի համամասնությամբ լինելով տարբեր, ըստ կրելու եղանակի, նաև սանրվածքի, ունեն երկու պարտադիր տարր՝ կոպի և գլխաշոր:

3. Զանազան կարգի պատմական հուշարձանների և ազգագրական նյութերի տվյալների հիման վրա փորձ է արվում հետևելու գլխի հարդարանքի այդ երկու տիպի կենցաղավարման պատմությանը, ինչպես և հայերի մեջ դրանց տարածվածությանը տակավին վաղ միջնադարից:

4. Հնագիտական հուշարձանները հնարավորություն են ընձեռում բացահայտելու մեզ հետաքրքրող գլխի հարդարանքի նախատիպերի գոյությունը Հայկական բարձրավանդակում և սահմանամերձ ընտարածքներում՝ հայ ժողովրդի կազմավորումից դեռ շատ առաջ:

5. Շատ ժողովուրդների հայտնի կոպիների և գլխաշորերի հնագույն նմուշների բացահայտումը թվում է, թե ուշագրավ կարող է լինել գլխի հարդարանքի այդ տիպի ծագման հարցը լուծելու առումով:

Ա.Ա.ՕՌԱԲԱՇՅԱՆ
ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ուխտագնացության սովորությունը հայտնի է աշխարհի շատ ժողովուրդների, մասնավորապես արևելյան: